

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հանցանքն ու ոճիրը գոյություն են ունեցել մարդկության առաջացման հենց սկզբից, իսկ հասարակական խմբերի և հարաբերությունների ձևավորման արդյունքում ստացել են տարբեր դրսևորումներ:

Որոշ հանցագործությունների իրագործումը, պայմանավորված դրանց ծավալներով, պահանջում է մի խումբ մարդկանց մասնակցություն: Այսիսկ պատճառով, փորձառու հանցագործները ձևավորում են կազմակերպված հանցախմբեր, որոնց ճյուղավորման և հանցավոր գործողությունների արդյունքում պարագլուխների վաստակած եկամուտները հասնում են ահռելի չափերի: Նմանատիպ մարդիկ ստիպված են իրենց ապօրինի եկամուտներն ամեն զնով օրինականացնել թաքցնելով դրանց անօրինական և կասկածելի ծագումը:

Փողերի վաճույնն այն երևույթն է, որն օրինականացնում է ոչ օրինական ճանապարհով ձեռք բերված գումարները: Անցած տասնամյակում այս երևույթն արժանացավ ամենախաղեայ ուշադրության: Առաջին անգամ «փողերի վաճույն» արտահայտությունը հնչեց 1973 թվականի հունիսի 17-ին, ԱՄՆ նախկին նախագահ Նիքսոնի իրավական հարցերի խորհրդականի շուրթերից. երբ համաշխարհային ոչ մի իրավական ուղղության մեջ փողերի վաճույնն առանձին հանցագործություն չէր համարվում: Այսօր ամբողջ աշխարհում որպես ֆինանսական հանցագործություն փողերի վաճույնն ամենախճճված երևույթներից է:

Կասկածից վեր է, որ փողերի վաճման հանցանքը հանդիսանում է հանցավոր գերտերությունների կողմից մեծ եկամուտներ վաստակելու, վառելիքի կամ այլ կենսարար նյութերի ձեռքբերման հանցավոր և ապօրինի գործողությունների բաղկացուցիչ մասը՝ կամ դրանց անմիջական հետևանք է: Այս երևույթն ամբողջ աշխարհի համար մեծ սպառնալիք է, քանզի կարող է նպաստել պետությունների քաղաքական դիրքորոշման փոփոխմանը, սեփական սեկտորի թուլացմանը, սեփականաշնորհման գործընթացում խղճնդոտների առաջացմանը, ինֆլացիայի և սովերային տնտեսության զարգացմանը, հանցավոր գործողությունների եկամտաբերությանը և այլն:

Անհրաժեշտ վերահսկողության բացակայության, անպատժելիության, փողերի վաճման գործողությունների զաղտնիության, խճճվածության, հանցագործների կողմից նորստույն մեթոդների կիրառման և աշխարհագրական սփռվածության միջոցով, միջազգային հանցախմբերն ամեն կերպ աշխատում են թույլ չտալ, որպեսզի փողերի վաճման գործընթացը վերահսկվի: Սա է

պատճառը, որ մինչ օրս լվացված փողերի քանակության մասին որևէ ճշգրիտ տեղեկություն գոյություն չունի, իսկ վերլուծական և անվտանգության մարմինների կողմից կատարված հաշվարկները մոտավոր և հարաբերական են:

Կասկածից վեր է, որ հիշյալ երևույթն այսօր վերածվել է համաշխարհային հանրության հիմնախնդիրներից մեկին և դրա հետևանքները լուրջ հարված կարող են հասցնել ցանկացած պետության տնտեսությանն ու պետական համակարգին: Փողերի լվացման երևույթի դեմ պայքարն այսօր առավել քան երբևէ արդիական և կարևոր է:

Որոշ աղբյուրների հավաստմամբ ամեն տարի լվացված փողերի քանակությունը կազմում է 2,8 տրիլիարդ դոլար¹: ՄԱԿ-ի հրապարակումներում 1987 թվականին թմրանյութերի ապօրինի շրջանառության տարեկան ծավալը 300 միլիարդ դոլար էր: Բնականաբար, հիշյալ գումարները լվացվում են տարբեր եղանակներով և տարբեր վայրերում²: Մեկ այլ աղբյուրի կողմից հրապարակված տվյալների համաձայն տարեկան 300-500 միլիարդ դոլար գումար է լվացվում, որը կազմում է աշխարհի համախառը արտադրանքի երկու տոկոսը³:

Հաշվի առնելով այն փաստը, որ հիշյալ գումարների մեծ մասը կրկին վերադարձվում է հանցավոր կամ ապօրինի շրջանառության դաշտ, կարելի է պատկերացնել, թե անօրինական կապիտալն ամեն տարի ինչ տեմպերով է աճում: Ըստ միջազգային բավական լուրջ աղբյուրների հրապարակումների 1998 թվականին լվացված փողերի քանակությունը կազմել է աշխարհի տարեկան համախառն արտադրանքի 2-5 տոկոսը⁴:

Անկասկած, ապօրինի գումարների լվացումն իրականացվում է հիմնականում այն երկրներում, որոնց պաշտպանական և անվտանգության համակարգն առավել թույլ է և գոյություն չունի եկամուտների վերահսկողության ճշգրիտ համակարգ: Հիշյալ գործընթացն ահռելի մեծ վնաս է հասցնում երկրի տնտեսական համակարգին, ուստի դրա դեմ պայքարելու համար նախևառաջ անհրաժեշտ է վերանայել դրանց դեմ պայքարի միջոցները և օրենքները⁵:

Մի կողմից, պետական և հատկապես Ֆինանսական կառույցները, պարտավոր են չտոնահարել քաղաքացիների իրավունքները և պահպանել նրանց

¹ Criminal justices money laundering-<http://www.lib.msu.edu/harris> 23:

² Sherman, T. international efforts in money laundering, 1993. vol. 1. 38, effort to combat money laundering: The financial action task force.:

³ Ռուզբահան, Փողերի լվացումն ու դրա հետևանքները տնտեսության վրա՝ 2001, Թեհրան:

⁴ Քիանի Ջադե, Փողերի լվացման քննարկում, Իմամ Սադեդ համալսարանի հրատարակություն, 2005, Թեհրան, էջ 66:

⁵ Ռազավի, Օրենսդրության դերը փողերի լվացման դեմ պայքարի գործընթացում, 2005, Թեհրան, էջ 80-81:

անծի ազատությունը, սակայն, մյուս կողմից, պարտավոր են վերահսկել նրանց եկամուտներն ու եկամտի աղբյուրների օրինականությունը:

Իրանում այս գործընթացն իրականացվում է հատուկ վերահսկողական մարմինների կողմից, որոնք մախսառաջ ուսումնասիրում են կրոնական-իրավական պահանջները, հաշվի առնում բոլոր հոգևոր պատվիրանները և դրանից հետո մշակում հատուկ մեթոդներ և օրինագծեր ներկայացնելով հաստատման: Համակարգը բավականին կանոնակարգված և խիստ է, սակայն, այդուհանդերձ Իրանում ապօրինի եկամուտների տարեկան շրջանառությունը 20 միլիարդ դոլար է: Այս ցուցիչն ընդգծում է ապօրինի փողերի լվացման գործընթացի դեմ պայքարի անհրաժեշտությունը: Պաշտոնական աղբյուրների համաձայն Իրանում թմրանյութերի ապօրինի շրջանառությունից ստացվող տարեկան եկամուտը 3 միլիարդ դոլար է, իսկ տարբեր ապրանքների մաքսանենգ ճանապարհով ներմուծումից ստացվածը 6 միլիարդ: Մաքսանենգ արտահանումից ստացված եկամուտը կազմում է 10 միլիարդ դոլար⁶:

Այս հոդվածում աշխատել ենք հակիրճ ներկայացնել անօրինական փողերի լվացման երևույթը, նրա տեսակները, իրագործման փուլերն ու եղանակները, իրավական-կրոնական մոտեցումներն ու Իրանի օրենսդրական պայքարը դրա դեմ:

Փողերի լվացման երևույթը

Երրորդ հազարամյակի շեմին ապօրինի փողերի լվացումը ճանաչվեց աշխարհի ամենամեծ հանցագործությունը, սակայն, այսուհանդերձ, շատ քչերն են այս արտահայտությանը ծանոթ: Յուրաքանչյուր երկրում այն մեկնաբանվում է յուրովի և գոյություն ունեն որոշակի ձևաչափեր, որոնց համաձայն սահմանվում է, թե որ գործողությունն է թույլատրելի և օրինական, կամ՝ հակառակը: Բնականաբար, փողերի լվացման իմաստն ու նրա ընկալումը նույնպես կարող են լինել տարբեր⁷:

Ոմանք համոզված են, որ «փողերի լվացում» արտահայտությունը կապված է 1930-ականներին ԱՄՆ-ի մաֆիաներին պատկանող լվացքատների ցանցի հետ⁸: Ամերիկյան մաֆիան հիշյալ լվացքատների ցանցը ձեռք էր բերել խաղատնային բիզնեսից, ապօրինի և մաքսանենգ շրջանառությունից, մարմնավաճառներից և կավատներից ստացված գումարներով: Բավական պրիմիտիվ ծագումով այս արտահայտությունն այսօր աշխարհի ամենահինջեղ և ահագանգ թվացող արտահայտությունն է: Փողերի լվացման գործընթացը բավա-

⁶ «Քեյիան» օրաթերթ, թիվ 18678, 09.09.1385:

⁷ Թագիրի, Փողերի լվացում և բանկային համակարգ, 2005թ, Թեհրան, էջ 22:

⁸ Ասլանի, Փողերի լվացում, 2006թ, Ֆարս տեղեկատվական կայք:

կան երկար և խճճված գործողությունների շարք է, որոնց արդյունքում կեղտոտ և անօրինական ճանապարհներով վաստակված գումարները «մաքրվում» են և դառնում օրինական⁹։ Գործողություններն իրականացվում են հանցավոր խմբավորումների միջոցով, որոնք, հաճախ, հատուկ են մեկ պետության սահմանները։

Կենտրոնական բանկը փողերի լվացման դեմ պայքարի նպատակով փողերի լվացման երևույթներից է սահմանել հետևյալ գործողությունները

1. Հանցագործության արդյունքում ձեռքբերված կամ հանցագործության պատճառ հանդիսացող գումարների օգտագործումն ու պահպանումը։
2. Գումարային գործարքներ այն մարդու կամ մարդկանց հետ, որոնք ինչ որ կերպ կապված են անօրինական գումարների, հանցավոր ճանապարհով ձեռքբերված կամ հանցագործության պատճառ հանդիսացող գումարների շրջանառության հետ¹⁰։

Փողերի լվացման եղանակներ

Բոլոր տեսակի ապօրինի գումարները (սև, մոխրագույն, արյունոտ) լվացվում են 4 հիմնական եղանակներով, որոնք են.

1. Փողերի ներքին լվացումը, երբ երկրի ներսում ապօրինի ճանապարհով ձեռք բերված գումարները լվացվում և օրինականացվում են նույն երկրում։
2. Փողերի արտահանված լվացումը, երբ երկրի ներսում ապօրինի ճանապարհով ձեռք բերված գումարները օրինականացվում են երկրից դուրս։
3. Փողերի ներմուծված լվացումը, երբ տարբեր երկրներում ապօրինի ճանապարհով ձեռքբերված գումարները բերվում են մեկ երկիր և այնտեղ օրինականացվում։
4. Փողերի արտաքին լվացումը, երբ ապօրինի ճանապարհով տարբեր երկրներում ձեռքբերված գումարները լվացվում են այդ երկրներում, ինչպես նաև դրանց սահմաններից դուրս¹¹։

Փողերի լվացման փուլերը

Փողերի լվացման գործընթացն այնքան էլ դյուրին չէ և իրականացվում է հիմնականում երեք փուլերով, որոնք կարող են լինել միաժամանակ կամ հաջորդաբար։ Փողերի լվացման եղանակները հանցագործների կողմից ենթարկվում են պարբերական փոփոխությունների՝ ինչը բարդացնում է դրանց ուսումնասիրության և կանխարգելման հնարավորությունները։ Վերջին երրորդ

⁹ Թագիբի, նույնը, էջ 21։

¹⁰ Սադեղյան, Փողերի լվացում, Ռեռֆաի բանկի տեղեկատվական կայք, 2007 թվ։

¹¹ Ռազափի, Օրենսդրության կարևորությունը փողերի լվացման դեմ պայքարում, 2004, Թեհրան, էջ 78։

փուլի համեմատությամբ առաջին երկու փուլերն առավել հեշտ բացահայտելի են և կանխարգելման ենթական: Հիշյալ երեք փուլերը հետևյալն են.

1. Նախապատրաստումը¹², որի ընթացքում գումարն իր հիմնական վայրից տեղափոխվում է: Այն իրագործվում է բանկերի, խանութների կամ այլ ֆինանսական հիմնարկների միջոցով գումարների կանխիկացմամբ:

2. Շերտավորումը¹³, երբ կանխիկ գումարների մի մասը փոխանցվում է նույն հիմնարկության տարբեր հաշվեհամարներին: Սա հիմնականում քողարկման փուլն է, որի ընթացքում կորում են անօրինական գումարների հետքերը:

3. Ընդհանրացումը¹⁴, որը նաև գումարների վերադարձման վերջնական և կարևորագույն փուլն է: Այս ընթացքում սկզբնական աղբյուրները հետ են վերադարձվում՝ հետագայում օրինական կամ ոչ օրինական շրջանառության մեջ մտնելու նպատակով:

Փողերի վլացման հիմնական գործողության արդյունքում ապօրինի խոշոր գումարների տերերը դրանք մանրացնում են կամ էլ վերածում գույքի:

Փողերի վլացման մեկ այլ մեթոդ է դրանց փոխանցումը դեպի ազատ բանկային գոտի ունեցող երկրներ, որոնցից է, օրինակ, Շվեյցարիան: Ապօրինի գումարները ներդրվում են նմանօրինակ երկրների բանկերում և օրինական գումարների հետ շրջանառության արդյունքում դրանց զանազանումը դառնում է անհնարին¹⁵:

Փողերի վլացման գործընթացն իրանի իսլամական Հանրապետությունում

Արդյո՞ք փողերի վլացման գործընթացը յուրահատուկ է միայն զարգացող երկրներին: Իհարկե, ոչ: Այն աշխարհի ընդհանուր հոգսերից և սպառնալիքներից մեկն է, որից ապահովագրված չեն ոչ զարգացած և ոչ էլ զարգացող երկրները: Իհարկե ստվերային և անառողջ տնտեսություն ունեցող երկրներում փողերի վլացման հավանականությունն ու դրա հնարավոր վտանգները մի քանի անգամ ավելի մեծ են:

Փողերի վլացման երևույթն ունի մի քանի կարևոր գործոններ, որոնք են.

1. անառողջ տնտեսությունը, 2. թմրանյութերի և մաքսանենգ ապրանքների շրջանառությունը, 3. կենտրոնական բանկի վերահսկողությունից դուրս գտնվող վարկատու հիմնարկներն ու գրավատները:

¹² placement

¹³ playering stage

¹⁴ integration

¹⁵ Ջոյս, GPML Փողերի վլացման դեմ պայքարի համաշխարհային ծրագրի մասնագետ, Ֆարս լրատվական գործակալություն, 2007 թ:

Անառողջ ասելով ի նկատի ունենք սովերային և կոռումպացված տնտեսությունը, որը կարող է խաթարել իշխանության կողմից մշակված քաղաքականությունը եկոնոմիկան արտադրականից դարձնելով ռեստային:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն, Իրանում մաքսանենգ ճանապարհով ներկրվող ապրանքների տարեկան չրջանառությունը կազմում է 6 միլիարդ դոլար: Տարբեր տարիներին թմրանյութերի չրջանառությունից ստացված եկամուտը գերազանցել է նավթի եկամուտներին: Թմրանյութերի հիմնական մասն առաքվում է Եվրոպա, սակայն Աֆղանստանից կամ Պակիստանից այնտեղ հասցնելու համար դրանք իրացնողները ստիպված են տարրանցիկ ճանապարհով հատել Իրանը՝ պատճառելով մարդկային և ֆինանսական մեծ վնասներ¹⁶:

Ծխախոտի մաքսանենգ ներկրումից ստացված Իրանի տարեկան եկամուտը կազմում է 800 մլն դոլար, իսկ թեյինը 200 մլն թուման¹⁷:

Իրանը փողերի լվացման օջախներից մեկը դարձնող հիմնադրյուններից մեկը թմրանյութերի և այլ ապրանքների մաքսանենգ չրջանառությունն է, որին իր հերթին նպաստում է Իրանի աշխարհագրական դիրքը, ինչպես նաև Աֆղանստանի և Պակիստանի հետ 1925 կմ ընդհանուր սահմանը: Ինչպես հայտնի է, ամբողջ աշխարհում թմրանյութերի պատրաստման և իրացման գործում Աֆղանստանն առաջին տեղում է և ապահովում է Եվրոպայում չրջանառվող թմրանյութերի 80 տոկոսը: Թմրանյութերը Աֆղանստանից կամ Պակիստանից Եվրոպա հասցնելու համար պետք է անցկացվեն Իրանի տարածքով, և հենց սա էլ դառնում է ապօրինի գումարների ձեռքբերման և հետագայում այդ փողերի լվացման պատճառ: Իրանում ապօրինի եկամուտների մեկ այլ աղբյուր է մաքսանենգ ապրանքների չրջանառությունը, որը սովերային տնտեսության կարևորագույն դրսևորումներից է: Ոչ պաշտոնական աղբյուրների հավաստմամբ երկրի հարավային նավահանգիստներում գոյություն ունի մոտ 63 կառանատեղ, որոնց գործունեությունը մաքսային մարմինների վերահսկողությունից դուրս է: Մաքսայենգ ճանապարհով ներկրվող ապրանքների մոտ 62 տոկոսը գալիս է այստեղից: Սկսնայտ մեծ է նաև տարբեր ապրանքների մաքսանենգ արտահանումը, որը նույնպես նպաստում է ապօրինի գումարների ձեռքբերմանն ու դրանց հետագա լվացմանը¹⁸:

¹⁶ Քիանի գաղե, Փողերի լվացման երևույթի վերլուծումը, 2004, Ղոմ, էջ 150:

¹⁷ Ֆարյադ Ռաս, Փողերի լվացման երևույթի ազդեցությունը ֆինանսավարկային քաղաքականության մշակման վրա, Իման Սադեդ համալսարանի հյուստ., 2004թ., Թեհրան, թիվ 27, էջ 75:

¹⁸ Ելշեգյարան Ղազվինի, Փողերի լվացումն Իրանում, 2002, Սպահան, էջ 45:

Իրանում ապօրինի եկամուտների ձեռքբերմանն ու լվացմանը նպաստող հաջորդ կարևորագույն օբյեկտներից են բարեգործական վարկատու կազմակերպություններն ու գրավատները, որոնց գործունեությունը կենտրոնական բանկի վերահսկողությունից դուրս է: Բարեգործական ձևակերպվող վարկատու կազմակերպությունները, սովորաբար, հիմնադրվում են մեծահարուստ «բարերարների» կողմից կամ նրանց ներդրումներով, որոնց թիվը վերջին տարիներին անհամեմատ աճել է:

Ապօրինի գումարների շրջանառությունը սարսափելի մեծ վնաս է հասցնում ցանկացած երկրի տնտեսությանը՝ խաթարելով դրա հիմքերը: Այն կարող է կրճատել պետական բյուջեն՝ անկայուն դարձնելով տնտեսական քաղաքականությունը: Ուստի, անհրաժեշտ է, որպեսզի ամբողջ աշխարհը միահամուռ կերպով պայքարի ապօրինի գումարների ձեռքբերման և դրանց լվացման գործընթացների դեմ:

Փողերի լվացումը որպես հանցագործություն

Ցանկացած երկրում հասարակական արժեքներին հակասող և վտանգավոր հանցագործությունների կանխման և դրանց դեմ պայքարի կարևորագույն գործողությունը դրանց կրիմինալիզացիան կամ քրեորեն պատժելի դարձնելն է: Փողերի լվացման գործընթացի հանցավոր լինելու մասին կարծիքները տարբեր են: Որոշ երկրներ համոզված են, որ փողերի լվացման գործընթացը կանխելու համար որոշակի հանցագործությունների համար սահմանված պատիժները բավական են: Ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Իրանում, քրեորեն պատժելի հանցագործությունների դասին են պատկանում թմրանյութերի և ոգելից խմիչքների շրջանառությունը, անօրինական աշխատանքը, խարդախությունը, գողությունը, դրամաշորթությունը, կաշառակերությունը, մարդկանց առևանգումը, շահագործումը, մարդասպանությունը, խաղամոլությունը, թրաֆիքինգը, մարմնավաճառությունն ու վաշխառությունը: Որոշ երկրների կողմից հիշյալ հանցագործությունների արդյունքում ձեռքբերված փողերի լվացումը, որպես մեկ ուրիշ հանցագործության դրդապատճառ չի դիտարկվում: Նրանք համոզված են, որ փողերի լվացումն առանձին գործողություն է, որն իրականացվում է պատժից խուսափելու նպատակով: Ինչպես նշեցինք գոյություն ունեն տարբեր կարծիքներ, սակայն, փողերի լվացման հանցավոր գործողությանը նպաստող գործոնները բաժանվում են երեք հիմնական խմբերի, որոնք են՝ ա) ունեցվածքի կամ գումարների ձեռքբերման հանցավոր գործարքների կազմակերպում կամ մասնակցություն, բ) հանցավոր ծանապարհով ձեռքբերված ունեցվածքի կամ գումարների ներմուծում կամ արտա-

հանում. գ) անօրինական ֆինանսական գործարքների հեշտացում կամ օժանդակում¹⁹:

Փողերի վաճման հանցագործության առանձնահատկություններից են հանցագործության երկրորդական, միջազգային և կազմակերպված հանդիսանալը, ինչպես նաև, հանցագործությունն իրականացնողների թվացյալ բարեպաշտ և օրինապահ կերպարը: Հանցագործությունը ստիպում է, որպեսզի այն իրականացնողները շահարկեն պատվավոր կազմակերպությունների, բանկերի կամ նմանատիպ այլ կառույցների հեղինակությունը՝ կորցնելով իրենց կողմից ներդրվող կեղտոտ գումարների հետքերը: Սովորաբար, հանցագործությունների արտաքին տեսքն ու բարեկրթությունը թույլ չի տալիս, որպեսզի նրանց հանդեպ կասկած հարուցվի²⁰:

Իրավագետները բոլոր հանցագործությունները բաժանում են երեք հիմնական դասերի, որոնք հետևյալն են.

1. Մարդկանց կյանքին և անվտանգությանը սպառնացող հանցագործություններ, որոնցից են սպանությունը, մարմնական վնասվածքներ հասցնելը և այլն

2. Ֆինանսական կամ գույքային հանցագործություններ, որոնցից են գողությունը, վաշխառությունը և խարդախությունը

3. Հասարակական անվտանգությանն ու խաղաղությանը սպառնացող հանցագործություններ, որոնցից են դրամի կեղծումն ու լրտեսությունը²¹:

Իհարկե, չպետք է մոռանալ, որ գոյություն ունեն որոշ հանցագործություններ, ինչպես օրինակ փողերի վաճումը, որոնք չեն պատկանում հիշյալ դասերից ոչ մեկին, սակայն, քրեական արդարադատությանը սպառնացող և բազմաթիվ այլ հանցագործությունների սկզբնաղբյուր և հետևանք հանդիսացող հանցագործություններ են:

Փողերի վաճման քրեականացման կրոնաիրավական խոչընդոտները

Իրանում գոյություն ունեն որոշ կրոնաիրավական սկզբունքներ, որոնք հանդիսանում են փողերի վաճումն առանձին հանցագործություն համարելու խոչընդոտ: Նմանատիպ սկզբունքներից է «բարաաթը»՝ արդարացման սկզբունքը, որը հանդիսանում է քաղաքացիների ապահովության և բարօրության գրավականը: Այս սկզբունքի նպատակն այն է, որ իշխանավորները չկարողանան խեղճացնել և հալածել իրենց ընդդիմացող քաղաքացիներին: Այն գոյություն ունի նաև Իրանի Իսլամական Հանրապետության ներկայիս իրավական համա-

¹⁹ Չազայերի, Փողերի վաճումը որպես առանձին հանցագործություն, 2003, Թեհրան, էջ 120, 121:

²⁰ Թագիբի, Փողերի վաճում, 2005, Թեհրան, էջ 30-32:

²¹ Գոլդուզիան, Քրեական օրենսգիրք, 2002թ, Սպահան, էջ 34:

կարգում և ամրագրված է սահմանադրության 37-րդ հոդվածով: ԻԻՀ սահմանադրության 49-րդ հոդվածում, որը վերաբերվում է ապօրինի ունեցածքի և գույքի հայտագրմանն ու օրինականացմանը գրված է, որ պետության կողմից ցանկացած վճիռ պետք է կայացվի համապատասխան մանրամասնությունների, պատճառաբանությունների հաշվի առնմամբ և շարիաթի բոլոր օրենքների համապատասխան:

Այսինքն, դատախազը պետք է հաշվի առնի հանցագործության նյութական, բարոյական և օրինական բոլոր առանձնահատկություններն ու մանրամասները²²:

Իհարկե, որոշ հանցագործությունների առումով օրենսդիրը առանց բարոյական գործոնների հաստատման, բավարար է համարել հանցագործության նյութական գործոնի առկայությունը:

ԻԻՀ օրենսդրության համաձայն, երբ որևէ մեկը ապօրինի գույք կամ գումար է ստանում, գումարները կամ գույքը սառեցվում են, դրանց տերը կանչվում է դատարան, որտեղ նա կարող է ապացուցել իր եկամուտների կամ ձեռքբերված գույքի ծագման աղբյուրների օրինականությունը: Հավաստի փաստարկների ներկայացման դեպքում գույքը կամ գումարը օրինականացվում են և հանձնվում տիրոջը: Իսկ հակառակ դեպքում գույքը բռնագրավվում է, իսկ դրանք յուրացնողը ենթարկվում է քրեական պատասխանատվության²³:

Գոյություն ունեն մեծ և օրինակներ, որոնք որոշակի կերպով խոչընդոտում են փողերի լվացումը որպես առանձին քրեորեն պատժելի հանցագործություն դարձնելու գործընթացին: Սակայն, Իրանի Իսլամական Հանրապետության հոգևոր և իրավական համակարգերն ամեն կերպ ջանում են կանխարգելել փողերի լվացման երևույթը և հնարավորինս սահմանափակել այն՝ որպես երկրի տնտեսական և հասարակական հիմքերը խաթալող երևույթ և Ֆինանսատնտեսական աղետ:

Այսուհանդերձ, Իրանի կրոնական առաջնորդների կողմից ներկայացված սահմանումներում և ներքին իրավական օրենքներում գոյություն ունեն վավերագրեր և օրենքներ, որոնք փողերի լվացման գործընթացը համարում են քրեական հանցագործության առանձնահատուկ տեսակ: Ստորև կթվարկենք կրոնական և իրավական աղբյուրներից և վավերագրերից միայն մի քանիսը:

Կրոնական վավերագրեր

²² Աշուրի, Արդարացման սկզբունքն ու նրա հետևանքները քրեական գործերում, Քաղաքագիտական և դատաիրավական ինստիտուտի հանդես, համար 29, 2005թ. Թեհրան, էջ 122:

²³ Շանս Նաթերի, Արդարացման սկզբունքն ու նրա կիրառումը քրեական օրենսգրքում, Ղոմի բարձրագույն հոգևոր ճեմարանի հանդես, 2002, Ղոմ, էջ 79:

Իսլամական ուսմունքն ու հատկապես Ղուրանը խստորեն դատապարտում են փողերի լվացման գործընթացը: Այս մասին Ղուրանում գրված է հետևյալը. «Կեղծ և անիրավ մեթոդներով մի յուրացրեք Միմյանց հարստությունը»²⁴, «Ով հավատացյալներ, ապօրինի կերպով մի յուրացրեք միմյանց հարստությունը»²⁵: Ինչպես տեսնում ենք, երկու այեներում էլ շեշտադրված է յուրացնել բառը: Կրոնական իրավագետները վերոհիշյալ երկու այեները համարում են հարստության ապօրինի յուրացման դատապարտման հիմք: Որոշ կրոնական աղբյուրներում ունեցվածքի ապօրինի ձեռքբերումը սահմանվում է «ուտել» բառով: Գույքի ապօրինի յուրացումը վնասում է հասարակությանը այն դարձնելով արատավոր և պղծված²⁶: Կրոնագետները համոզված են, որ հաշվի առնելով այն, որ եկամտի աղբյուրները ոչ օրինական և կեղտոտ են, փողերի ոչ մի լվացման գործընթաց չի կարող օրինականացնել դրանք, իսկ օրենքը կարող է ցանկացած փուլում դրանք դնել կալանքի տակ կամ բռնագրավել:

Ղուրանն ավետում է հետևյալը. «Բարի գործում և բարեպաշտության մեջ սատարեք միմյանց և մի համագործակցեք մեղքեր և թշնամանք հարուցող գործերում»²⁷: Այս այեն հանդիսանում է բոլոր քաղաքական, հասարակական, բարոյական և իրավական խնդիրները պարունակող սկզբունք: Իսլամական իրավագետներն այն կիրառում են համարյա բոլոր իրավական հարցերում: Այն հաշվի է առնվում նաև բոլոր առևտրային պայմանագրերում և գործարքներում:

Վերոհիշյալ այեներից բացի գոյություն ունեն նաև կրոնական ավանդապատումներ, որոնք դարձյալ վերաբերվում են ապօրինի կերպով ուրիշների ունեցվածքին տիրանալու և այն յուրացնելու կարևորագույն խնդրին, որոնք այսօր առավել քան երբևէ արդիական են: Շիա մահմեդականների առաջնորդ սբ. Ալիմ երրորդ խալիֆայի կողմից բաշխված գումարների օրինականացման առումով ասել է հետևյալը. «Աստված վկա, որ կգամ և տիրոջը կվերադարձնեմ այն ամենն ինչ ապօրինի կերպով վերցրել ես մահմեդականներից և բաժանել ուրիշներին: Եթե անգամ, վճարել ես ստրուկներ զնելու կամ քեզ համար կին առնելու զխազին»²⁸:

Հաճախ կեղտոտ և ապօրինի գումարները ներդրվում են օրինական չրջանակներում, որոնցից է ամուսնանալիս կանանց համար զխազին վճարելը: Ինչպես արդեն տեսանք, սբ. Ալիմ պատգամել է, որ ոչ մի պատճառաբանու-

²⁴ Ղուրան, սուրա «Ալ-բաղարե», այե 188:

²⁵ Ղուրան, սուրա «Ալ-Նեսա», այե 29:

²⁶ Թաքաթաբայի, Թաֆսիր-օլ-միզան, թարգ. Սեյյեդ Մոհամմադ Բադեր Համադանի, 2001թ., Թեհրան, հ 4, էջ 500:

²⁷ Ղուրան, սուրա «Ալ-մատդե», այե 2:

²⁸ Նաիջ-օլ-բալադե, թարգ. Մոհամմադ Ջաֆար Էմամի և Մոհամմադ Ռեզա Աշթիանի, 1996, հ 1, էջ 93, քարոզ 15:

թյուն չի կարող օրինականացնել ապօրինի և կեղծ ճանապարհով ծեղքերված գումարները և դրանք ենթակա են վերադարձման կամ պետականացման: Փողերի վլացման գործընթացում ներգրավված բոլոր անձիք քաջատեղյակ են վերոհիշյալ պատգամին. սակայն, դա նրանց չի խղճըղոտում:

Բոլոր կրոնական վավերագրերը դատապարտում են փողերի վլացման գործընթացը, այն համարում հանցագործություն, իսկ իրականացնողներին հանցագործ: Ղուրանի սրբազան այեներից մեկում գրված է հետևյալը. «Ով իմ ցեղակիցներ, ամենայն արդարությամբ պահպանեք չափն ու կշիռը, մի թերագնահատեք մարդկանց իրերն ու ապրանքները, մի կրճատեք նրանց հասանելիքն ու երկրի վրա ապականություն մի տարածեք»²⁹: Սյստեղ ընդգծվում և դատապարտվում է ապրանքը թերակշռելու և մարդկանց խաբելու փաստը, որը համարվում է երկրի վրա ապականության և անառակության տարածում: Քանզի թերակշռումը կարող է դառնալ առևտրի հանդեպ բացասական տրամադրվածության պատճառ, որն էլ իր հերթին վտանգում է երկրի տնտեսության հիմքերը:

Փողերի վլացումն իր միջազգային բնույթի համաձայն պատկանում է կազմակերպված հանցագործությունների դասին: Տնտեսությանը հասցրած նրա վնասները թերակշռումի կամ խաբեության վնասներից ավելի մեծ են: Հիշյալ երևույթն իսլամական հասարակության կողմից ճանաչվում է որպես սադրանքի կարևորագույն աղբյուր: Իսլամը պատգամում է ամեն կերպ պայքարել անօրինության և անառակության դեմ, որպեսզի երկրի վրա ապականություն չտարածվի և որքան ավելի դաժան լինեն հանցագործությունների համար սահմանված պատժամիջոցները, այդքան ավելի շատ հնարավոր կլինի դրանց կանխարգելումն ու իսպառ վերացումը: Միայն այս դեպքում հնարավոր կլինի առողջ և անարատ հասարակության ձևավորումը:

Իրավական վավերագրեր

1. Միջազգային վավերագրեր

Վերջին տասնամյակների ընթացքում փողերի վլացման գործընթացը դատապարտելու և այն հանցագործություն համարելու նպատակով կնքվեցին տարբեր միջազգային փաստթղթեր և կոնվենցիաներ: Ստորև կանդորադառնանք դրանցից մի քանիսին. որոնք առավել հատկանշական են:

1998 թվականի դեկտեմբերի 20-ին ՄԱԿ-ն կողմից կնքված թմրանյութերի և հոգեմետ դեղերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային կոնվենցիան, որն առավել հայտնի է «Վիեննայի 1988 կոնվենցիա» անվամբ: Հաշվի առնելով, որ այն վերաբերվում է միայն թմրանյութերին և շրջանցում է հանցա-

²⁹ Ղուրան, սուրա «Հուդ», այե 84:

գործության և ապօրինի եկամուտների աղբյուր հանդիսացող մյուս ճանապարհները, կոնվենիցան թերի է: Սակայն, այսուհանդերձ, այն ներկայացվեց Իրանի Իսլամական խորհրդի քննարկմանը և մեծ ուշադրության արժանացավ:

2000 թվականին Պալեոմոյուն ՄԱԿ-կողմից կնքվեց կազմակերպված հանցավորության դեմ պայքարի միջազգային կոնվենցիան: Իրանը Վիեննայի և Պալեոմոյի կոնվենցիաներին միացավ 2001 թվականին:

1990 թվականին Ստրասբուրգում եւս կողմից կնքվեց հանցավոր ճանապարհներով ձեռքբերված գումարների վաճառման դեմ պայքարի միջազգային կոնվենցիան, որի 6-րդ հոդվածում ներկայացվում են փողերի վաճառման որպես հանցագործություն, տարրատեսակները:

Ներքին վավերագրեր

Պետությունների տնտեսական անառակության բարձրագույն ցուցիչը սահմանվել է 10 բալլ: Իրանի վիճակը տնտեսական ախտոտվածության առումով մյուս երկրներից անհամեմատ ավելի լավ է և գնահատվում է 2,9: Սակայն, ցանկացած իսլամական կառավարական համակարգից սպասելիքներն ավելի շատ են: Լավագույն արդյունքին հասնելու համար Իրանում մշակվում են կանխարգելիչ դատաիրավական ծրագրեր:

ԻԻՀ Սահմանադրության 49-րդ հոդվածն ու նրա իրագործմանը վերաբերվող օրենքները վերաբերվում են ապօրինի եկամուտներին և ունեցվածքներին: Այս հոդվածի համաձայն պետությունը պարտավոր է բռնագրավել և տիրոջը վերդարձնել հանցագործության, սպանության, գողության, դրամաշորթության, կաշառակերության, մարմնավաճառության, կավատության, թղթախաղի, մարդկային աշխատուժի շահագործման, թրաֆիքինգի, ապօրինի պետական գործարքների, անօրինական հողերի և գույքի վաճառքի, պետական պաշտոնի չարաշահման, անառակ օբյեկտների կառուցման արդյունքում, ինչպես նաև այլ ապօրինի ճանապարհներով ձեռքբերված գումարներն ու գույքը, իսկ տիրոջ անհայտ լինելու դեպքում՝ դրանք պետականացնել: Վճիռը պետք է իրագործվի իշխանության կողմից իսլամական շարիաթի համաձայն: Վերոհիշյալ հոդվածն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Նրա դրական կողմը ապօրինի եկամուտների ձեռքբերման ճանապարհների և դրանցից ստացված օգուտների ընդհանրացումն է: Մինչդեռ, գոյություն ունեցող միջազգային կոնվենցիաները վերաբերվում էին կոնկրետ գործողություններին և որոշակի գործարքներից ստացված ապօրինի եկամուտներին: Նրանց համար սահմանված էր մեկ չորրորդի չափով գումարային տուգանք: Իրավագետների համոզմամբ, սահմանված տուգանքը շատ քիչ է և ոչ մի կերպ չի կարող հանդիսանալ համա-

պատասխան կանխարգելիչ միջոց³⁰։ Անկասկած, պետության քաղաքականությունն ու էկոնոմիկան վտանգող հանցագործների հանդեպ պետք է կիրառվեն առավել խիստ պատժամիջոցներ, որոնց մասին Ղուրանում գրված է հետևյալը. «Եվ երկրի վրա որևէ աճմեղ մարդու սպանողը, կարծես ինձ է սպանել, եվ երբ որևէ մեկը փրկել է մեկ ուրիշի կյանքը, կարծես ինձ է փրկել։ Եվ երբ որևէ մեկը գեներքի սպառնալիքով հարձակվում է ամենը մարդկանց վրա, խլում նրա ունեցվածքն ու անարգում պետք է մահապատժի արժանանա և կախաղան բարձրացվի։ Հակառակ դեպքում նրան աջ ձեռքը և ձախ ոտքը հատել ու արքորել նրան»³¹։

Հիշյալ հանցագործությունների կանխարգելման հարցում կարևոր է նաև դատաիրավական համակարգերի համագործակցությունն ու ներդաշնակությունը։ Նմանատիպ վտանգավոր հանցագործությունների վերաբերյալ քաղաքական և օրենսդիր մարմինների տարբեր մոտեցումները դատական մարմնին գցում են դժվարությունների և խճճվածության մեջ, որից հանցագործներն, անպայմանորեն, օգտվում են։ Վերոհիշյալ օրենքի 9 հոդվածով սահմանված պատիժը համահունչ չէ մյուս օրենքներին, սակայն 1988 թվականի աշնանը հաստատված կաշառակերության, դրամաշորության և խարդախության մասին օրենքում սահմանված է հետևյալը. «Եթե վերոհիշյալ հանցագործների գործողությունները խմբակային են, ապա հանցագործը դատապարտվում է մահապատժի»։ Մեկ ուրիշ օրենքով Ֆինանսական ապօրինի գործողությունների համար որպես պատժամիջոց սահմանված է 1-8 տարի ժամկետով ազատազրկումը՝ գույքի առգրավմամբ։ Ինչպես տեսնում ենք այստեղ մեկ չորրորդի մասին խոսք անգամ չկա և այս օրենքն ավելի կատարյալ է։ Բացի վերոհիշյալ դրույթներից և օրենքներից 2009 թվականի աշնանը ԻԻՀ նախագահի կողմից հաստատվեց և հրապարակվեց պատժամիջոցների մասին նոր օրենք, որը բաղկացած է 49 հոդվածից։

Հիշյալ օրենքով կտրականապես արգելվում է առանց անձնագրի առկայության և անհատների անմիջական ներկայության, էլեկտրոնային տարբերակով Ֆինանսական գործարքների իրականացումը։ Նույն օրենքի 6, 25 և 27 հոդվածները փողերի լվացման դեմ պայքարող կազմակերպություններին տալիս է հատուկ արտոնություններ՝ միաժամանակ պաշտպանելով քաղաքացիների իրավունքները։

³⁰ «Քեյխան» օրաթերթ, համար 18678, 09/09/1385 ի, Շահիդ Բեհեշի համալսարանի ղոկտոր պրոֆեսոր Սոհամմադ Ալի Արդաբիլիի տեսակետը։

³¹ Ղուրան, սուրա «Ալ-մադեթ», այե 32,33։

Նախագահի կողմից հրապարակված օրենքը վերաբերվում է բոլոր Ֆինանսավարկային հաստատություններին, բանկերին, արժեթղթերի շուկաներին, ապահովագրական ընկերություններին, պետական և ոչ պետական գրասենյակներին, բարեգործական հիմնադրամներին, քաղաքապետարաններին, նոտարական գրասենյակներին, ինչպես նաև հաշվապահներին, հաշվետարներին, արդարադատության համապատասխան մարմիններին և բոլոր նրանց ովքեր իրականացնում են կանխիկ Ֆինանսական գործարքներ, այդ թվում նաև ոսկի, հնաոճ իրեր, գորգեր, շարժական և անշարժ գույք վաճառողներին: Բոլորը պարտավոր են իրենց գործունեությունը ծավալել հիշյալ օրենքի սահմաններում:

Այս ամենից բացի, ԻԻՀ կառավարությունը փողերի վաճառման դեմ պայքարի գործում նույնպես լուրջ քայլեր է ձեռնարկել: Ստորև կանդրադառնանք դրանցից առավել հատկանշականներին:

- Կտրուկ խստացվել է Ֆինանսական կազմակերպությունների և նրանց միջոցների շրջանառության վերահսկողությունը:
- Ոչ պետական Ֆինանսավարկային կազմակերպությունների վերահսկումը համաձայնարվել է կենտրոնական բանկին:
- Բոլոր բանկերին պաշտոնապես կարգադրվել է խստագույնս պայքարել փողերի վաճառման երևույթի դեմ և ոչ մի կերպ չսատարել ապօրինի գումարների շրջանառությանը:

Օրենքն ուժի մեջ է մտել 2002 թվականին և պաշտոնապես բաժանվել բոլոր պետական և ոչ պետական բանկերին: Անկասկած, վերոհիշյալ բոլոր իրավական և կրոնական պատժամիջոցները, օրենքները, բոլոր կանխարգելիչ միջոցառումները դեռևս ի գործու չեն կանխելու փողերի վաճառման սարսափելի երևույթը, սակայն կարևոր քայլեր են և, մեր խորին համոզմամբ, համապատասխան մարմինների ճշգրիտ և համաձայնեցված գործողությունների արդյունքում հնարավոր է հասնել ցանկալի նպատակի³²:

Ինչպես նշեցիք հոդվածի սկզբում ամբողջ աշխարհում տարեկան 500 մլն դոլար ապօրինի գումար է վաճառվում, որը միջազգային Ֆինանսական համակարգում բավական ուշագրավ թիվ է: Գումարների ապօրինի շրջանառությունն ու կեղտոտ փողերի վաճառումը խաթխում են պետության տնտեսական և քաղաքական հիմքերը: Հատկապես զարգացող պետությունները պետք է խստորեն պայքարեն իրենց երկրների ներքին տնտեսական անվտանգությանը սպառնացող այդ երևույթի դեմ:

³² Մահմուդի, նույնը, էջ 210:

Իրանի Իսլամական Հանրապետությունը, միանալով Վիեննայի 1988 և Պալեոնոյի կոնվենցիաներին, պարտավորվել է խստացնել իր պայքարը փողերի լվացման սարսափելի հանցագործության դեմ՝ իր գործողությունները համաձայնեցնելով կոնվենցիայի անդամ մյուս երկրների հետ: Կրոնական շարիաթի համաձայն փողերի լվացումն անթույլատրելի և ապօրինի գործողություն է և, ինչպես տեսանք, հոգևոր և կրոնական բոլոր աղբյուրները դատապարտում են այն՝ սահմանելով խիստ պատիժներ: Իհարկե, կրոնական տեսանկյունից գոյություն ունեն որոշ սկզբունքներ, ինչպես օրինակ արդարացման սկզբունքը, որոնք ինչ որ հույսեր են տալիս հանցագործներին, սակայն, նրանց արդարացումներն ու պատժառաքանությունները ընդունելի են այնքան ժամանակ, քանի դեռ չի ներկայացվել իրենց մեղքը հաստատող ավելի հզոր ապացույց: Բոլոր վիճահարույց հարցերը առավել խորը և մասնագիտական ուսումնասիրության կարիք ունեն: Մեր խորին համոզմամբ, ցանկացած վճիռ և որոշում պետք է կայացվի լուրջ ուսումնասիրության և բոլոր մանրամասների ու հանգամանքների հաշվի առնմամբ, սակայն, գոյություն ունեն գործողություններ, որոնց հետևանքները ոչ միայն տարածաշրջանային և ազգային, այլև՝ միջազգային սպառնալիքի աղբյուր են:

Փողերի լվացման դեմ պայքարի ասպարեզում Իրանը լուրջ քայլեր է ձեռնարկել՝ 2009 թվականին հասպարակելով այդ երևույթի դեմ պայքարի մասին առանձին օրենք: Գործադրված ջանքերն ունեն բազմաթիվ դրական կողմեր, սակայն, հանցագործների համար սահմանված քրեական պատասխանատվությանը վերաբերվող հոդվածը, (9 հոդվ.) բավական մեղմ և, ըստ մեզ, անարդյունավետ է: Բացի այդ՝ այն չի համապատասխանում խարդախության, կաշառակերության և դրամաշորթության մասին օրենքին: Փողերի լվացման հանցագործության համար սահմանված պատիժը պետք է համապատասխանի կրոնական շարիաթով սահմանված պատիժներին, քանզի Ղուրանը նմանատիպ հանցագործությունների համար սահմանել է ծայրահեղ պատիժ: Ուստի, անհրաժեշտ է, որպեսզի հիշյալ օրենքը կրկին վերանայվի և ենթարկվի որոշակի փոփոխությունների, որոնց արդյունքում կփոփոխվեն սահմանված պատժամիջոցներն ու կվերացվեն առկա թերությունները: